

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ՝- ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 17 Սեպտ. — Բաբեկ. Ս. Խաչի պահոց: Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Թառութիւն, մեր վերնամասերն մէջ. ժամարան էր Հոգշ. Տ. Յովնէփ Վրդշ:

● Դշ. 20 Սեպտ. — Մայր Տանարին մէջ Ս. Կոյր ծննդեան հանդիսաւոր նախատեսակին նախադրեց լուսարարայեան Գերշ. Տ. Հայրիկ եպոս:

● Եշ. 21 Սեպտ. — Ծնունդ Ս. Աստուածմէն: Առաւօտուն, լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրիկ եպոս. Առաւօտունի զխաւարութեամբ, Միաբան Հայրեն ինքնաշարժով մեկնեցաւ Գեթեմանի ծորը ու շարափառեցով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տանար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Գատարազը մատուց և աւարտ պատշաճի քարոզեց Գերշ. Հանդիսացեալ Սրբազանը:

● Եր. 23 Սեպտ. — Ամեն. Ս. Գատարազը Հայրը նախագահեց Մայր Տանարին մէջ պաշտօնաւոր խաչվերացի մեծանշանէն նախատեսակին, որից ետք, ըստ օւղորութեան, Ս. Խաչափայտի մատուցը թափօրով փոխադրուեցաւ Ս. Գլխադրի մատուցէն Աւագ Սեդան:

— Գիշերապահին Մայր Տանարին մէջ պաշտօնեցան Եկեղեցեհի և Հովման Գորգի: Հանդիսացեալն էր լուսարարայեան Գերշ. Տ. Հայրիկ եպոս. Առաւօտուն:

● Կիր. 24 Սեպտ. — ՏՕՆ ՎԵՐԱԾՄԱՆ ՍՐՈՑ ԽԱՅԻՆ: Օրուան հանդիսաւոր Ս. Գատարազը՝ Մայր Տանարի Աւագ Սեդանին վրայ մատուց և քարոզեց Ամեն. Ս. Գատարազը Հայրը, ընտան աւանդելով զՅի հաւ խաչին Կրօնեւոյն յիմարութիւն է, այլ փրկելոց մեզ զօրութիւն Աստուծոյ: Գործող է Ս. Գատարազին մաս մը, մէկ ժամ տեղաւորեալ, ծախսափառեցան Սրբազանին ռատիօկայանէն, ըստ օւղորութեան, Ս. Գատարազին ետք Գատարազեցաւ հոգեհան: զբոսեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյ և ազգի բարեբաղնի Կարապետ և Գրիգոր Մելքոնեան Կարապետներու հոգի՝ երես համար, նախագահութեամբ լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրիկ եպիսկոպի: Արարողութեան աւարտին, Միաբանութիւնը ՎՐԱ զանաբառ բազմակի քոշ շարահաներգելով բարձրացաւ Գատարազը բաշտ:

— Կէսօրէ վերջ, Մայր Տանարին մէջ պաշտուեցաւ խաչվերացի մեծանշանէն ՎԱՊԱՏԱՆԻՆ, հանդիսացեալութեամբ Ամեն. Ս. Գատարազը Հօր և ի ներկայութեան հաւատացեալներու խոռոչեալ բազմութեան:

● Բշ. 25 Սեպտ. — Յիւստակ մեկնոց: Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխադրի: Գատարազին էր Բեթլեհէմի Ս. Մննդեան վանաց ժա:

մարար Արժ. Տ. Գրիգոր Գնչ, Աւագեան, Ապո, Գերշ. Տ. Սուրեն Արքեպոս. Քէմանեանի նախադրութեամբ, Կատարազեցան հոգեհանդուտեան Կարգի, նախ՝ Մայր Տանարին մէջ, ապա Գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Գիւրգի Գորգի շիրմին վրայ, և հաւիթ ռարին՝ Էրն Կրատան և Զամ-Թաղի գերեզմանաւայրերուն մէջ:

● Եր. 30 Սեպտ. — ՏՕՆ Խաչի: Ս. Գատարազը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Նշան վերնամասերն մէջ, ժամարան էր Հոգշ. Տ. Արշակ Արք. Խաչատուրեան:

● Կիր. 1 Հոկտ. — Բաբեկ. Վարազայ Ս. Խաչի պահոց: Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Թառութիւն: Ժամարան էր Հոգշ. Տ. Երեմի Վրդ. Վարդանեան Ամեն. Ս. Գատարազը Հայրը Կատարազը շարժ Սարգիսազնեալ քահանայական ձեռնադրութիւնը (ե՛ւ էջ 315):

● Աւր. 6 Հոկտ. — Նախատեսակի պաշտուեցաւ Դպոսոյ Ս. Գերշ. Եկեղեցեւոյն մէջ: Հանդիսացեալն էր Գերշ. Տ. Սուրեն Արքեպոս:

● Եր. 7 Հոկտ. — Ս. Գերեզմայ զօրավարին: Առաւօտուն ժամերգութեանէ ետք, Գերշ. Տ. Սուրեն Արքեպոս. Քէմանեանի զխաւարութեամբ, Միաբան Հայրեն մեկնեցան Դպոսոյ Ս. Գերեզմայ վանքը, ուր Կատարազն Եկեղեցեւոյ մէջ Ս. Գատարազը մատուց և քարոզեց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ջըշանեան, ընտան աւանդելով ԵՆ ԵԿԻՔԻՔ ինծ վկայք յերեսադէմ ... և մինչև ի ծագեցին (Գորգ, Ա. 8): Ներկայացուց Ս. Գերեզմարի արիւթիւր ու անվեհեր քրիստոնեայ, որ շիրմաքանդակ իր կեանքի գինով իւր վկայելու քրիստոնեայ և ի ներայաբար ընթաց նշարաւորութեան գատարին Ս. Գատարազին ետք, Միաբանութիւնը պատուաթիւրուեցաւ Դպոսոյ Հոգշ. Տ. Երեմի:

— Կէսօրէ վերջ, Գերշ. Տ. Սուրեն Արքեպոս. Քէմանեանի զխաւարութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Թառութեան Տանար: Նշարափառի հանդիսաւոր մուտքէն և Ս. Գերեզմանի ուխտէն ետք, Երեմի Կատարազն Եկեղեցեւոյ խաչի նախատեսակը պաշտուեցան մեր վերնամասերն մէջ. Նախագահութեամբ Ն. Գերեզմարութեան, Ապա Կատարազեցաւ Տնօրէն Կահան Սրբաւորեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տանարին ներս: Թափօրացեալն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ջըշանեան:

● Կիր. 8 Հոկտ. — ՏՕՆ Վարազայ Ս. Խաչին: Գիշերապահին և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Թառութիւն, մեր վերնամասերն մէջ, Ապա, Գերշ. Տ. Սուրեն Արքեպոս. մատուց օրուան հանդիսաւոր Ս. Գատարազը՝ Գրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և քարոզեց՝ Նիւթ աւանդելով օրուան տօնը, Գործողն էր, Գերշ. լուսարարացեալ Տ. Հայրիկ եպոս. Նախագահեց Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վաղգէն Ա. ի ցահակաւորութեան և օծման ճրգ առաքարքին առիթով Կատարազած շարապետական Մաղ-թանքի արարողութեան, օրու ընթացքին զը հնչէին Տանարին հայկական անգիներ:

● Եր. 14 Հօգո. — Ս. 72 առկայեացն Գրիստոսի: Ս. Գատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գոսիթը՝ Ս. Գեորգայ սեղանին վրայ՝ ժամադրան էր Հօգը. Տ. Յովսէփ Վրդ.:

● Կիր. 15 Հօգո. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Թարսիսին, մեր վերնաորան մէջ: Ժամադրան էր Հօգը. Տ. Արշակ Արդ. Խաչատուրեան:

● Ուր. 20 Հօգո. — Թարգմանչաց կողմից աւար նախատեսակին ի Ս. Յովհր Նախագահաց Լուսարարացեալ Գերբ. Տ. Լայրիկ Եղո.:

● Եր. 21 Հօգո. — Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց (Տօն ազգային եւ եկեղեցական): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ Ս. Գատարազը մատուց Վրդ. Մատենադարանի Տեսուչը՝ Հօգը. Տ. Անուշաւան Վրդ. Զղշանեան, որ քարոզեց՝ ընտրան ունենալով սրտան Հաջ Տարագմանի առաջին տունը — Վեմանայ Մովսէսի ... և, համառօտապէս անդադրանալով Թարգմանիչ Հայրերէն իւրաքանչիւրին կենեքին ու ցործեալին: Ս. Գատարազէն ետք, ըստ ընկալելի սովորութեան, Գատարուեցաւ Կողմնակցութեան Կանգիտար պաշտօն՝ Ս. Աթոռայի և ազգայ մեծանուն բարերար Գլուխօտ Կիրակչեանին՝ ինչպէս նաեւ իր կողակցին և ծնողաց կողմններուն համար, Նախագահութեամբ Լուսարարացեալ Գերբ. Տ. Լայրիկ Եղո.:

● Կիր. 22 Հօգո. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Լերդապետութեան ժամադրան էր Հօգը. Տ. Գեղամ Արդ. Զաքարեան: Գարգեց Հօգը. Տ. Անուշաւան Վրդ. Զղշանեան, Նիսիս ունենալով Ս. Կորնի, ԺԲ. 4-11 համարները, Յայտնեց թէ Տէրը թէն իր քանքարները Լուսարար կերպով չէ բաժանած մարդաց միջև, սակայն մենք իտաւուք յանինք զանկատաւ Նախախնամութեան այս զերգացնցորէն իմաստուն կարողութեան ղէմ, որով միայն պայմանաւոր է ներգայնագիւթիւնը մեր մարդկանին վրայ: պէտք չէ մօռալ նաեւ թէ որուն որ շատ է աւրուած՝ շատ ալ պիտի պահանջուի անկէ և թէ մեր պարագանութիւնն է մեղի բաժին ինկած քանքարները բազմադատիկ արդիւնաւորել:

● Գշ. 24 Հօգո. — Առաւօտեան ժամը 10ին, Ս. Թաղիսանց Մայր Տաճարին մէջ Գատարուեցաւ Սահարանական Մարթանէ՝ Միսկեալ Ազգաց Կազմակերպութեան Հիմնարկութեան 16րդ տարեգործին առթիւ, Նախագահութեամբ Լուսարարացեալ Գերբ. Տ. Լայրիկ Եղո. Առաւօտին:

● Եր. 28 Հօգո. — Ս. չորից Աւետարանչացն: Այսօրուան Ս. Գատարազը, որ սովորաբար կը մատուցուէր Ս. Թարսիսին Տաճարի գոսիթին վրայ բացառաւ Ս. Յովն. Աւետարանչի հոյսդատական մատրան մէջ, անդի յունեցաւ՝ Ս. Թարսիսին բա ին մէջ Տաճարի նորագութեան նպատակաւ Կատարուած պիղծմաներուն պատեհաւ: Առոր փոխարէն, Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Գատարազը մատուց նորընծայ Հօգը. Տ. Վաչէ Արդ. Իոյնադուրեան:

● Կիր. 29 Հօգո. — Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Գատարազը մատուց նորընծայ Հօգը. Տ. Կոմիտաս Արդ. Գատարուեցաւ:

● Բշ. 30 Հօգո. — Ս. Յովսէփ Աստուածաճօռ անին առթիւ, Ս. Գատարազը մատուցուեցաւ Գիթեմանիին Ս. Առաւօտածանայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Գատարազեց, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հօգը. Տ. Փռնէն Արդ. Աւետիքեան:

● Գշ. 31 Հօգո. — Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Գատարազը մատուց նորընծայ Հօգը. Տ. Վահրէն Արդ. Գաղանձեան:

● Գշ. 1 Նոյմ. — Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Գատարազը մատուց նորընծայ Հօգը. Տ. Վաղարշ Արդ. Խաչատուրեան:

● Եշ. 2 Նոյմ. — Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ պատարազեց նորընծայեալն ուսուցիչն ու վարժիչը՝ Հօգը. Տ. Անուշաւան Վրդ. Զղշանեան: Ըստ սովորութեան, նորընծայները կը աղաատակէին Ս. Խորհուրդին:

● Եր. 4 Նոյմ. — Կեօրէ վերջ, Ամեն. Ս. Գատարազը Հօր զխաւարութեամբ, Միաբանութեան մեկնեցաւ Ս. Թարսիսին Տաճար. Վերաւաճութեամբ Կանգիտար մատուցէ, ինչպէս նաեւ Ս. Գերեզմանի և Գիտ Խաչի արիւն ախտերէն ետք, երեկոյեան ժամերգութիւնն ու Գիտ Խաչի Նախատեսակը պաշտուեցան վերջնայ Կից՝ Լուսարարական Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նախագահութեամբ Նորին Ամենապատուութեան Այլ Կատարուեցաւ Տնօրինական Սրբառարեան պայցելութեան Կանգիտար թափար Տաճարին ներս: Թափարապետն էր Հօգը. Տ. Անուշաւան Վրդ. Զղշանեան:

● Կիր. 5 Նոյմ. — Գիւտ Սաչ: Գիւրեղային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ ժամադրան էր Հօգը. Տ. Վահրէն Արդ. Գաղանձեան: Այլ Կատարուեցաւ եռագործ մեծանշան թափար՝ Գրիտատի Ս. Գերեզմանին և Գատարուեցաւ չուրջ, զխաւարութեամբ Ամեն. Ս. Գատարազը Հօր՝ որ, ամպօգանիկ տակ, Կենաց Փայտի մատենքով կ'որնէր Տաճարը լեցնող բազմաթիւներ: Ս. Գերեզմանի Առաւելին մէջ երգուեցաւ Եղիշ ք. Գրիտատի, որուն ընթացքին Ս. Գատարազը Թափարով խնկարկեց Սրբաժայրին չուրջ: Արարողութիւնները աւարտեցան կէսօրուան ժամ. Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

● Կիր. 12 Նոյմ. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յովհր ժամադրան էր Հօգը. Տ. Արշակ Արդ. Խաչատուրեան:

● Գշ. 15 Նոյմ. — Առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Գերբ. Լուսարարացեալ Տ. Լայրիկ Եղո. Ուրար կըրու աղաւթներէն տուաւ Ս. Աթոռայ ընծայարանին ուսանողներէն Յովնանէն Հարկեանին և Թափար Կապտուեանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Գշ. 26 Սեպտ. — Գիշերուսան ժամը 8ին, Պէյ-րուսթէն ժամանած 80 երկնեւանդամներէ բաղկացած «Անդրաւիկ Երզնայեան» իր առաջին շաբաթը տուաւ Սինէմա Համրայի մէջ, Ներկայ էին Միաբան Հայերէր և հոծ բազմութիւն մը, հայ թէ օտար. Բացի մենեքաներէ և խմբերգիներէ, տեղի ունեցան նաև հայկական և կովկասեան պարեր և արարերէն երգեր՝ որոնք հիառքանէ ծափահաւառութիւններ խլիչին հանդիսականներէն:

● Եր. 30 Սեպտ. — Կէսօրէ վերջ, Պաղեստինի Պապական Առաքելութեան Նախագահ Մոնտէնիօր Ժոզէֆ Բայանի ի պատիւ, Ամպաստոր պաշտօնի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. և Տիար Կարպիս Զինզիան:

— Երեկոյեան, Ժառանգաւորաց Վարժարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ պարսկական ծանօթ մանրանկարիչ Արաբամ Գուրգենեանի Յուցանեղէսը՝ Նախագահութեամբ Լուսարարական Գերշ. Տ. Հայրիկ Եպս. և ի ներկայութեան Միաբան Հայերէր և հրատիւրեալներու կողմէ բազմութեան:

● Բշ. 2 Նոյմ. — Այսօր վերադառնացաւ Ս. Աթուայ ժառ. Վարժարանն ու Ընծայարանը, եւամեայ արձակուրդի շրջանէ մը ետք:

● Եր. 7 Նոյմ. — Կ. վ. ժամը 4ին, American School of Oriental Researchի գլորացական 1961-62 տարեշրջանի բացման առիւ տարբուած թէյանսեղանին ներկայ եղաւ Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ.:

● Բշ. 6 Նոյմ. — Անդրական Հիւպատոս Մր. Հէնաբըրըն այցելեց Պատրիարքարան:

● Եր. 11 Նոյմ. — Երեկոյեան, Գերմանիայ Աւետարանական Եկեղեցւոյ Խորհուրդի Նախագահ Տքթ. Գուրթ Շարֆի ի պատիւ, Լուսերականներու եկեղեցւոյ սրահին մէջ տրուած թէյանսեղանին ներկայ եղան Լուսարարական Գերշ. Տ. Հայրիկ Եպս., Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. և Տիար Կ. Հինդլան:

● Կիր. 12 Նոյմ. — Կ. վ. ժամը 4ին, Սէուտական Արաբիայի Հիւպատոսարանին մէջ, Ն. Վ. Սէուտ Թագաւորի գահակալութեան Տրդ տարեգարմի առիւ տարբուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Հոգշ. Տ. Գեորգ Վրդ., Հոգշ. Տ. Գեղամ Արք. և Տիար Կարպիս Զինզիան:

● Գշ. 14 Նոյմ. — Ն. Վեն. Հիւսէյն Թագաւորի ծննդեան 27րդ տարեգարմին առիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իր Ս. Յակոբեանց Միաբանութեան և Յորդանանի Հայ Համայնքին կողմէ շնորհաւորական հեռագիր մը յղեց Ամանի Արքեպիս:

— Նոյն առիթով, Կ. վ. ժամը 4ին, Հարամ Եկրիֆի Եկիսին կողմէ, Ռաուտայի սրահին մէջ տարբուած թէյանսեղանին ներկայ եղաւ Հոգշ. Տ. Յակոբ Վրդ., ընկերակցութեամբ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. և Տիար Կ. Հինդլան:

— Նոյն առիթով, Ամանի Պաղատապետարանի սրահին մէջ՝ Ն. Վեն. Վարչապետ Պահաթ Թալ-հուսի կողմէ տրուած ընթերցման ներկայ եղաւ Ն. Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետո ունեւանով Պաղատապետարանը Հոգշ. Տ. Գեղամ Արքեպիս:

ՍԻՈՆ-ի Տարեկան Բաժնեգիրն է,
բոլոր երկիրներն համար, ԱճՂԼ. Շիխն 20

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem (Jordan)

تصدرها - بطريق كية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النياقة رئيس الاساقفة هايكازون أبراهيان

العدد ١٠ - ١١

تطبع في مطبعة دير الارمن - القدس

اكتوبر - نوفمبر ١٩٦١

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Archbishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent-Printing Press, Jerusalem.

